Այն առաւօտ Ասլանը բաւական լաւ տրամադրութեան մէջ էր գտնուում. այդ պատահում էր նրա հետ այն ժամանակ միայն, երբ մի որեւէ նպատակի հասնում էր: Նա սկսեց մինչեւ անգամ ինձ հետ հանաքներ անել: Սպիտակ կատուն, որ սովորաբար առաւօտեան բոլոր տանեցիներից առաջ էր մտնում մեր սենեակը եւ ողջունում էր մեզ, այն առաւօտ, հակառակի պէս, առաջ ինձ մօտեցաւ, քսքսոեցաւ, մռմռաց եւ իր ճապուկ պոչով իմ երեսը շփելուց յետոյ մօտեցաւ Ասլանին:

— Հիմա նա էլ է քեզ մարդու տեղ դնում, Ֆարհատ, — ասաց նա ժպտալով :

— Ոչ միայն նա, — պատասխանեցի ես նոյնպէս ժպտելով, — այլ վարպետ Փանոսի ախոռատան ծառան եւս, երբ ինձ տեսնում է, ոտքի է կանգնում: Երէկ նա ինձ ասաց «աղա»:

Ասլանը նոր էր լոացոել եւ սանդրւում էր, նա սանդրը ձեռին կանգնեց իմ առաջ եւ ասաց.

— Գիտե՞ս այսօր ուր պիտի գնանք:

— Երեւի դարձեալ պիտի գնանք ծակերի մէջը մտնելու...

— Ոչ, պէտք է գնանք նորին սրբազնութեան՝ առաջնորդի մօտ:

— Նրա մասին շատ վատ են խօսում:

— Այդ ես գիտեմ, եւ հէնց այդ պատճառով պէտք է տեսնել նրան:

— Ասում են նա կատարեալ չարագործ է:

— Երբեմն չարագործները շատ զօրեղ գործիք են դառնում լաւ մարդկանց ձեռքում: Պօղոսը նոյնպէս մի չարագործ էր, բայց վերջը քրիստոնէութիւնը տարածողների մէջ ամենանշանաւորը եղաւ:

— Իսկ Վասակը՞:

— Վասակը իր ժամանակին նոյնպէս ամենանշանաւոր մարդն էր: Եթէ բոլոր հայ նախարարների գլուխները թափ տալու լինէիր, նրա կէսի չափ խելք չէր դուրս գայ:

— Բայց նա չարագործ էր, նա մեծ վնասներ տոեց իր հայրենիքին:

— Այդպէս երեւում է, որովհետեւ նրա պատմութիւնը գրողները նրա հակառակ կուսակցութեանն էին պատկանում: Իսկ եթէ նրա խորհուրդներին հետեւելու լինէին, նա մեծ օգուտներ կարող էր հասցնել իր հայրենիքին:

Ես զարմացայ Ասլանի դատողութեան վրայ: Թէեւ հայոց պատմութիւնը չէի կարդացել, բայց Վասակի մասին շատ վատ բաներ էի լսել: